

ԱՄՓՈՓԱԳԻՐ
«ԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ
ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Ներկայացնում ենք մի մասը այս նոր հաղորդաշարի բազմաթիվ լեզվական սխալների, որոնք եթերի միջոցով «հանձնարարվում են» դպրոցահասակ երեխաներին:

Հաղորդաշարի բոլոր մասերում թե՛ սցենարական խաղին մասնակից չորս դպրոցականները, թե՛ Մատենադարանի կամ պարկերասրահի էքսկուրսավարները, խոսում են ա-ով: Պատանի հերոսներն անընդհատ գործածում են հատկապես մեծահասակների շրջանում տարածված բարբառային, խոսակցական լեզվին հատուկ բառեր՝ **թարգել**, **բարիշել**, **դզվել**, **կարենալ** և այլն: Մինչդեռ նրանք օլիմպիադաներում հաղթող, բանիմաց ու օրինակելի դպրոցականի կերպարներ են: Պետք է նկատի ունենալ, որ հատկապես դրական հերոսների խոսքը հանդիսատեսն ընկալում է որպես նմուշօրինակ և արագ ընդօրինակում, յուրացնում է այն:

Հաղորդաշարի հերոսներից մեկը՝ Գոռը, հերթական ուղևորության ժամանակ ընկերներին հյուրասիրում է իր տատիկի պատրաստած օգտակար թեյը: Բայց պարզվում է՝ Գոռը թեյի մեջ շաքարի փոխարեն սխալմամբ աղ է լցրել: Այս հաղորդաշարը նման է այդ թեյին. մտահղացումը լավն է, բայց կատարումը փչացնում է ամեն ինչ:

Սխալները ներկայացնում ենք ըստ բնույթի խմբավորած:

Օժանդակ ա-երն ու դերանունների սխալ ձևերն ուղղել ենք առանց վերլուծելու:

Լեզվատրամաբանական սխալներ

«Սևը «Յոթ վերք» եկեղեցին ա, որը գործել ա նույնիսկ Սովետական Միության տարիներին, երբ բոլոր եկեղեցիները փակվել էին, բացի Էջմիածնի Մայր տաճարից, մեկ էլ մեր «Յոթ վերքից» («Գյումրի»):

Գտնենք նախադասության տրամաբանական գիծը: «Յոթ վերքը» գործել է, երբ «Յոթ վերքը» չէր փակվել:

Խմբագրենք. «Սևը «Յոթ վերք» եկեղեցին է: Սովետական (նախընտրելի է՝ Խորհրդային) Միության տարիներին, երբ բոլոր եկեղեցիները փակվել էին, Էջմիածնի Մայր տաճարն ու մեր «Յոթ վերքը» գործում էին»: Կամ՝ «Սևը «Յոթ վերք» եկեղեցին է: Խորհրդային Միության տարիներին բոլոր եկեղեցիները փակվել էին, բացի Էջմիածնի Մայր տաճարից, մեկ էլ մեր «Յոթ վերքից»:

«Ինչքա՛ն եք սիրում **ձուկը ջրում խոսել**» («Դսեղ»):

Ձուկը ջրում խոսել դարձվածքի բացատրությունն է՝ **խոսել դեռ չեղած բանի մասին, խոսել ժամանակից շուտ**: Բայց այստեղ ընկերներից մեկը մյուսներին մեղադրում է դատարկ, անմիտ բաներ խոսելու համար: Հայերենում այս նշանակությամբ նույնպես դարձվածք կա, ու դարձյալ՝ **ձուկ** գլխաբառով, և հենց դա էր պետք գործածել:

Ճիշտ է՝ «Ինչքա՛ն եք սիրում **օղի մեջ ձուկ բռնել**»: Իսկ առանց դարձվածքի ճիշտ է՝ «Ինչքա՛ն եք սիրում **դափարկ տեղը խոսել**»:

Սխալ բառաձևեր

«Աչքերը **սուտի** փակած, պառկած ա» («Ստեփանավան»):

Այս սխալ **սուտի**-ն վերջերս հաճախ է գործածվում: Սուտ քուն մտնողն աչքերը ոչ թե **սուտի** է փակում, այլ **ստից**:

Ճիշտ է՝ «Աչքերը **ստից** փակած, պառկած է»:

«**Դե լավ, ստեսցյուն**» («Ստեփանավան»): Այս տարածված արտասանական սխալը գործածում է նաև պատկերասրահի էքսկուրսավարը. «**Ստեսցյուն**, ձեզ լավ օր», և երեխաները նրան պատասխանում են. «**Ստեսցյուն, մերսի** շատ» («Պատկերասրահ»):

Ճիշտ է՝ «**Դե լավ, ցտեսություն**», «**Ցտեսություն**, ձեզ լավ օր», «**Ցտեսություն**, շատ **շնորհակալություն**»:

«Ծով էլ չէ, Ծովեր: Էն էլ **բարձրունքում**» («Դսեղ»):

Տարածված սխալ է:

Ճիշտ է՝ **բարձունքում**:

«**Փորձվեք** մոտենալ» («Դիլիջան 1»):

Սա **բռնվել, վիճվել** սխալ բառերի շարքից է (**բռնել, վիճել** և այլն):

Ճիշտ է՝ «**Փորձեք** մոտենալ»:

«Ով ինչ լավ ա **կարում**, էդ էլ անում ա» («Դիլիջան 1»):

Սա բարբառային, այստեղ՝ անհանձնարարելի ձև է:

Ճիշտ է՝ «Ով ինչ լավ է **կարողանում**, այդ էլ անում է»:

«Եթե ճարպիկ դու **գտնվես**, հաջորդ բանալին հաստատ կգտնես» («Դիլիջան 1»):

Բանալին կարելի՛ է գտնել, բայց մարդը ճարպիկ **լինո՛ւմ է**, այլ ոչ **գտնվում**:

Ճիշտ է՝ «Եթե ճարպիկ դու **լինես**, հաջորդ բանալին հաստատ կգտնես»:

«Արի **սունդուկը** բացենք, տեսնենք մեջը ինչ ա» (Դիլիջան 1), «Գնանք, **սունդուկը** գտնենք» («Դիլիջան 1»):

Այս բառը ռուսերենում է сундук, հայերենում սա սխալ բառաձև է, և այն մեկ-երկու անգամ չէ, որ հնչում է հաղորդաշարում:

Ճիշտ է՝ «Արի **սնդուկը** բացենք, տեսնենք մեջը ինչ է», «Գնանք, **սնդուկը** գտնենք»:

«Եկեք **մի հատ** գնանք, **բարիշենք**» («Մատենադարան»):

Առաջին ընդգծումը՝ կապակցությունը բանավոր խոսքում տարածված սխալ է՝ ավելորդաբանություն, երկրորդը՝ բարբառային բառ:

Ճիշտ է՝ «Եկեք գնանք, **հաշտվենք**»:

«Փաստորեն, վանքը կառուցել են **կղզիի** վրա՞» («Սևան»):

Նշված բառը սխալ է հոլովված:

Ճիշտ է՝ «Փաստորեն, վանքը կառուցել են **կղզու** վրա՝»:

«Հաճախ էսպիսի կառույցներ տեղադրվում են տարածաշրջանի ամենաբարձր կետը **նշմարելու** համար: Իսկ մեծ ու փոքր Սևանների լուսանկարները **նրա համար էին, որովհետև** էստեղից երևում են երկուսն էլ» («Սևան 2»):

Նշված առաջին բառը սխալ է ընտրված, քանի որ տարածաշրջանի ամենաբարձր կետը ոչ թե նշմարելու, այլ նշելու մասին է խոսքը: Երկրորդ նախադասության մեջ նշված ձևակերպումը սխալ է:

Ճիշտ է՝ «Հաճախ այսպիսի կառույցներ տեղադրվում են տարածաշրջանի ամենաբարձր կետը **նշելու** համար: Իսկ մեծ ու փոքր Սևանների լուսանկարները **հուշում են, որ** (կամ՝ **դրել են, քանի որ**) այստեղից երևում են երկուսն էլ»:

«Եկեք, բացենք, **փենանք** ինչ ա» («Սևան 2»):

Նշվածը բարբառային, անհանձնարարելի բառ է:

Ճիշտ է՝ «Եկեք, բացենք, **փեսնենք** ինչ է»:

«Հումորը **թարգում ենք** ու լսում ենք ուշադիր» («Գառնի, Գեղարդ»):

Նշվածը բարբառային բառ է՝ պատանու բառապաշարին անհարիր:

Ճիշտ է՝ «Հումորը **թողնում ենք** ու լսում ենք ուշադիր» կամ «Հումորին **վերջ ենք տալիս** ու լսում ենք ուշադիր»:

«Լավ, **թողում եմ**, խոստացե՛ք» («Գառնի, Գեղարդ»):

Բանավոր խոսքում տարածված սխալ է:

Ճիշտ է՝ «Լավ, **թողնում եմ**, խոստացե՛ք»:

Տղաներից մեկը հայոց դիցարանի աստվածների անուններն է կարդում՝ Տիր, **Վահագի**, Աստղիկ...» («Գառնի, Գեղարդ»):

Եթե մասնակից պատանին չգիտի **Վահագն** աստծո անունը, պետք էր առիթն օգտագործել ու սովորեցնել:

«Ով առաջինը սկսեց հեգնել, մյուս առաջադրանքը պիտի **մենակով** կատարի» («Ստեփանավան»):

«Դե մտածեք՝ ով ա **մենակով** առաջադրանքը կատարելու» («Ստեփանավան»):

«Ինձ հետաքրքիր դարձավ, թե որքան կկարողանամ ես առաջ գնալ **մենակով**» («Մատենադարան»):

«Ինքը **մենակով** մեր դեմ ա» («Մատենադարան»):

«Հիմա **մենակո՛վ** եմ սնդուկը գտնելու» («Սևան 2»):

«Հսկա լճի մեջ էս փոքր տուփը կարողացա **մենակով** գտնել» («Սևան 2»):

Մենակ բառի գործիական հոլովաձևը գործածելը վերջին շրջանում տարածված սխալներից է, որը կասեցնելը նաև Հանրային հեռուստաընկերության գործն է:

Բոլոր օրինակներում պետք էր ասել՝ **մենակ**:

«Էստեղ պիտի լինի, եկեք **ման գանք**» («Ստեփանավան»), «Կգնանք, մեզ վտանգելով **ման կգանք**» (Դիլիջան 1):

Ըստ սցենարի՝ պատանիները փնտրում-գտնում են տրված հարցերի պատասխանները, և անընդհատ գործածվում է այս բարբառային **ման գալ**ը:

Ճիշտ է՝ «Այստեղ պիտի լինի, եկեք **փնտրենք**», «Կգնանք, մեզ վտանգելով **կփնտրենք**»:

«Վերջը **դգվեցի՛ր**» (մեղուն էր ձեռքը կծել (Դիլիջան 1)):

Ճիշտ է՝ **լավացա՛ր** կամ **կծածի ցավն անցա՛վ/ցավն անցա՛վ**:

«Իզուր չէ, որ բոլոր **օլիմպիադաները** հաղթում ես» (Դիլիջան 1):

Օլիմպիադանե՛րը չի հաղթում, այլ **օլիմպիադաներում**:

«Էն ժամանակ տները լուսավորվել են **երթիկով**» («Դսեղ»):

Ճիշտ է՝ «Այն ժամանակ տները **երթիկից** են լուսավորվել»:

«Ամբողջ կյանքում հիշում է Լոռին ու կարոտում, **որը** տեսնում ենք իր ստեղծագործություններում» («Դսեղ»):

Ճիշտ է՝ «Ամբողջ կյանքում հիշում է Լոռին ու կարոտում, **ինչը** տեսնում ենք իր ստեղծագործություններում»:

Սխալ ժամանակաձևեր

«Թուրքիայի հետ պատերազմի սպառնալիքը հաշվի առնելով՝ ռուսները **սկսեցին** հատուկ ուշադրություն հատկացնել Գյումրու ամրացմանը, և Նիկոլայ Առաջինի հրամանով էստեղ **կառուցվում ա** ամրոց: Գույնի համար այն **կոչվեց** սև: Նիկոլայը իր կնոջ՝ Ալեքսանդրայի պատվին Գյումրին **վերանվանում է** Ալեքսանդրապոլ» («Գյումրի»):

Այստեղ ժամանակաձևերի շփոթ կա: Նշված բայերը պիտի նույն ժամանակաձևում լինեն:

Եթե՝ **սկսեցին**, ուրեմն՝ **կառուցվեց, կոչվեց, վերանվանեց**: Ճիշտ կլիներ նաև՝ **սկսում են, կառուցում է, կոչվում է, վերանվանում է**:

«Տեղ չմնաց, որ **չփնտրենք**» («Մատենադարան»):

Խոսքը արդեն կատարված գործողության մասին է:

Ճիշտ է՝ «Տեղ չմնաց, որ **չփնտրեցինք/չենք փնտրել**»:

«Եկեղեցիները բարձրադիր վայրերում են կառուցել, որ թշնամին **չկարողանա հասնի**» («Սևան»):

Ճիշտ է՝ **չկարողանա հասնել**:

«Ես, օրինակ, **կուզեի** միջնադարում **ծնվել**» («Սևան»):

Ճիշտ է՝ **կուզեի... ծնված լինել**:

«Ես, օրինակ, **կուզենայի** էդ սպորտով **զբաղվեի**» («Սևան 2»):

Ճիշտ է՝ **կուզեի... զբաղվել**:

«Սրանով ի՞նչ ա **ուզում ասի**» («Սևան 2»):

Ճիշտ է՝ **ուզում ասել**:

«Մի օր **ջուր վերցնելուց** նա **մոռացել ա** քարը **դնի** իր **տեղում**: Առավոտյան, երբ մարդիկ **արթնանում են, բարկանում են**» («Սևան 2»):

Նախ՝ կա՛մ **ջուր վերցնելիս**, կա՛մ **ջուր վերցնելուց հետո**: Ապա՝ **մոռանում է** (ինչպես հաջորդ նախադասության մեջ է՝ **արթնանում են, բարկանում են**) և **տեղը** (այլ ոչ՝ **տեղում**) **դնել**:

Ճիշտ է՝ «Մի օր **ջուր վերցնելուց հետո/վերցնելիս** նա **մոռանում է** քարը **դնել** իր **տեղը**: Առավոտյան, երբ մարդիկ **արթնանում են, բարկանում են**»:

Չեմ եղել, բայց միշտ **ուզեցել եմ** լինել» («Գյումրի»), «Միշտ **ուզեցել եմ** էնտեղ **լինեմ**» («Դսեղ»):

Ճիշտ է՝ **ուզել եմ, ուզել եմ լինել**:

Սխալ ձևակերպումներ

«Առաջադրանքները **գնալով էլ ավելի** են բարդանալու» («Գյումրի»):

Ճիշտ է՝ «Առաջադրանքները **գնալով** բարդանալու են» կամ «Առաջադրանքները **էլ ավելի** են բարդանալու»:

Էքսկուրսավար- «Այս այն տունն է, որտեղ ծնվել է **Հովհաննես Թումանյանը և մանկությունն է ապրել այստեղ, որը 1939 թվականից որպես թանգարան գործում է**» («Դսեղ»):

Ըստ այս ձևակերպման՝ Թումանյանի մանկությունը գործում է որպես թանգարան:

Ուղղենք այս և մյուս սխալները՝ –«**Սա** այն տունն է, որտեղ ծնվել է **և մանկությունն է ապրել Հովհաննես Թումանյանը**: Այս տունը **1939 թվականից գործում է որպես թանգարան**» կամ «**Այս տունը, որը 1939 թվականից գործում է որպես թանգարան**, այն տունն է, որտեղ **ծնվել և մանկությունն է ապրել Հովհաննես Թումանյանը**»:

«Ես ուղղակի **մտածում եմ, որ ճանապարհը սխալ գնանք ու չիմանանք հեղու ինչ անենք**»
(«Դսեղ»):

Ճիշտ է՝ «Ես ուղղակի **վախենում եմ, որ սխալ ճանապարհով կգնանք ու հեղու չենք իմանա ինչ անել**»:

«Վարդգես **Սուրենյանցի կողմից է նկարված**» («Պատկերասրահ»):

Այս **կողմից** ավելորդ բառից պետք է ազատվել անգամ գործնական գրություններում, ուր մնաց՝ այն «տեղավորել» այսպիսի հաղորդաշարում:

Ճիշտ է՝ «Վարդգես **Սուրենյանցն է նկարել**»:

Էքսկուրսավարի խոսքից- «Թերևս **լավագույն Այվազովսկու կտավներից** մեկը...»
(«Պատկերասրահ») :

Ճիշտ է՝ «Թերևս **Այվազովսկու լավագույն կտավներից** մեկը...»:

«**Տղաներին ինձանից ինչ-որ բա՞ն ա պետք**» («Մատենադարան»):

Ճիշտ է՝ «**Տղաներն ինձանից ինչ-որ բա՞ն են ուզում**»:

«Ամենաթանկ բանը ժամանակն ա, ինչն էլ ես հիմա **իզուր վարնում եմ**» («Սևան»), «Էս **տղեն** անուղղելի ա, **անիմաստ ժամանակ ենք վարնում**» («Գառնի, Գեղարդ»):

Ժամանակը վատնելն այն անտեղի ծախսել, կորցնելն է, ուստի **իզուր** և **անիմաստ** բառերն այստեղ ավելորդ են:

Ճիշտ է՝ «Ամենաթանկ բանը ժամանակն է, ինչն էլ ես հիմա **վարնում եմ**», «Այս տղան անուղղելի է, **ժամանակ ենք վարնում**»:

Օտարաբանություն

«Պատրանքը **դա իյուզիան չի՞**» («Գյումրի»):

Հայերենում ենթական դերանվամբ չի կրկնվում (**դա**-ն ավելորդ է): Նաև ցանկալի է, որ հաղորդման գիտունիկները օտար բառը հայերենով ճշտեն, այլ ոչ հակառակը:

Ճիշտ է՝ «**Իյուզհան** պատրանքը չէ՞»:

Աշակերտներից մեկը ինքնաթիռին ձայն է տալիս՝ **էսպե՛ղ** («Գյումրի»):

Այս միտքը հայերեն հնչում է՝ **էսպեղ (այսպեղ) եկեք/նայեք/իջեք** և այլն:

«Ես հենց էդպես արեցի, երբ էդ հարցն **ինձ մոտ** առաջացավ» («Սևան»):

Ճիշտ է՝ «Ես հենց այդպես արեցի, երբ այդ հարցն **իմ մեջ** առաջացավ»:

«Տեսնո՞ւմ ես, Դավիթ, որ ուզում ես, **ստացվում ա մոտրդ**» («Պատկերասրահ»):

«Ոնց որ լավ էլ **քեզ մոտ ստացվում ա**» («Մատենադարան»):

Ճիշտ է՝ «Տեսնո՞ւմ ես, Դավիթ, որ ուզում ես, **կարողանում ես**»: «Ոնց որ լավ էլ **կարողանում ես**»:

«Հիմա կիմանանք, թե ինչ անենք էս **քարի հետ**» («Գառնի, Գեղարդ»):

Ճիշտ է՝ «Հիմա կիմանանք, թե ինչ անենք այս **քարը**»:

Հաղորդաշարը լեցուն է **օքեյ, մերսի** օտար բառերով:

Հայերեն համարժեքներն են՝ **լավ/շատ լավ, շնորհակալություն/շնորհակալ եմ**:

Այս ամփոփագիրը Հանրային հեռուստատեսության նոր հաղորդաշարի լեզվական անփութության ապացույցն է: Իսկ լեզվական անփութությունը, փորձը ցույց է տվել՝ միայնակ չի լինում: Հայկական եթերը, առանց այն էլ, քիչ բան է ներկայացնում պատանի հեռուստադիտողին: Այդ սուղ հեռուստաժամանակը, ինչպես այս հաղորդաշարի հերոսներից մեկը լեզվական սխալով կասեր՝ «պեպք չէ ավելորդ վարո՛նել»:

Երագիկ Գրիգորյան